



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
Archbishop Moushegh Mardirossian, Prelate
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու Առաջնորդներու Համատեղ Ս. Պատարագ

Հինգշաբթի, 11 Մայիս 2006-ի առաւօտեան ժամը 10-ին, Էջմիածնական Առաջնորդարանիստ վայրին մէջ տեղի ունեցաւ համատեղ Ս. Պատարագ, ներկայութեամբ եւ նախագահութեամբ Միջին Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու Առաջնորդներուն, յանձինս Հայ Առաքելական Եկեղեցւոյ զոյգ առաջնորդներուն՝ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեանի եւ Գերշ. Տ. Յովնան Արք. Տերտերեանի, Ղըպտի Ուղղափառ Եկեղեցւոյ Ամերիկայի Առաջնորդ Գերշ. Տ. Սերաբիոն Եպիսկոպոսի, եւ Ասորի Ուղղափառ Եկեղեցւոյ Ամերիկայի Առաջնորդ Գերշ. Տ. Եուծին Քափլան Արքեպիսկոպոսի: Ս. Խորանին կը սպասարկէին Գերայ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան եւ Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիւմեան: Ս. Պատարագին կը մասնակցէին հետեւեալ չորս առաջնորդութիւններու սահմաններուն մէջ ծառայող բոլոր հոգեւորականները, թիւով շուրջ հարիւր հոգի:

«Հրաշափառ»ի երգեցողութեամբ, չորս հոգեւոր Առաջնորդները Ս. Խորան բարձրացան եւ համատեղ կատարեցին Ս. եւ անմահ Պատարագը: Յուզիչ եւ տպաւորիչ էր պատկերը, երբ «Ողջոյն»ի ժամանակ բոլոր հոգեւոր հայրերը Զրիստոսի ողջոյնը եւ սուրբ համբոյրը փոխանակեցին իրարու հետ: Ս. Հաղորդութեան ժամանակ, ներկայ բոլոր եկեղեցականները, չորս շարք կազմած, երկիւղիւ եւ հաւատով մօտեցան եւ չորս հոգեւոր Առաջնորդներուն ձեռամբ հաղորդուեցան Զրիստոսի մարմինով եւ արիւնով:

Ս. Պատարագի աւարտին, հիւրընկալ Առաջնորդ Տ. Յովնան Արք. Տերտերեան բարի գալուստ մաղթեց բոլոր առաջնորդներուն եւ եկեղեցականներուն, այս պահը «պատմական օր» համարելով: Ապա հերթով հրաւիրեց Առաջնորդ Սրբազան Հայրերը, իրենց ողջոյնի խօսքը ուղղելու ներկայ եկեղեցականութեան: Իւրաքանչիւր հոգեւոր Առաջնորդի ողջոյնի խօսքէն առաջ, այդ եկեղեցւոյ հոգեւոր հայրերը երգեցին շարական մը իրենց եկեղեցւոյ հոգեւոր երգերէն: Առաջնորդները փառք եւ գոհութիւն յայտնեցին այս օրուան համար, շեշտեցին անհրաժեշտութիւնը նման հանդիպումներու, իրար ճանաչման եւ իրարմով հարստացման համար: Յիշեցին նաեւ չորս հոգեւոր պետերը՝ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Հայրապետը, Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետը, Շնուտա Գ. Պապը, եւ Չաքքա Պատրիարքը:

Գերայ. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեան, Առաջնորդ Սրբազան Հայրերու ողջոյնի խօսքերէն ետք, տուաւ օրուան պատգամը, եկեղեցւոյ Ս. Հայրերու խօսքերէն ծաղկաքաղ կատարելով եւ շեշտելով կերպարանափոխուելու անհրաժեշտութիւնը:

Արարողութեան աւարտին հաւաքական խմբակար առնուեցաւ, որմէ ետք տեղի ունեցաւ սիրոյ ճաշ: Ճաշի սեղաններուն շուրջ բոլորուեցան եկեղեցական հայրերը խառն կերպով՝ իւրաքանչիւր եկեղեցիէն: Բարձրացուեցան բաժակներ եւ առաջարկուեցան սիրոյ կենացներ: Արեւմտեան Թեմիս Առաջնորդ՝ Բարձ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան բոլոր ներկաներուն նուիրեց Կարօ Պետրոսեանի գրած «Հայաստանեաց Առաք. Եկեղացոյ Տօներ եւ Աւանդութիւններ» եւ «Մեծ Պահոց Կիրակիները» գիրքերէն օրինակներ:

Առաջնորդ Սրբազանները ունեցան նաեւ առանձնակի հանդիպում, ծրագրելով յառաջիկայ հաւաքական ու միատեղ ձեռնարկները: Սիրալիր մթնոլորտի մէջ սկսուած օրը հոգեւոր գիրկընդխառնումով եւ ողջոյնի խօսքերով իր աւարտին հասաւ, իւրաքանչիւրը իր աշխատանքներուն վերադառնալով:

Oriental Orthodox Churches Joint Divine Liturgy

On the morning of Thursday, May 11, 2006, a joint Divine Liturgy took place at the Western Diocese under the auspices of and with the participation of the Prelates of the Oriental Orthodox Churches, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, H.E. Archbishop Hovnan Derderian, Primate, H.G. Bishop Serapion of the Coptic Church, and H.E. Archbishop Mor Eugene Kaplan of the Syriac Orthodox Church. Serving at the altar were Very Rev. Fr. Muron Aznikian and Very Rev. Fr. Barthev Gulumian. Participating in the Liturgy were clergy members from each church.

With the singing of “Hrashapar” the four Prelates approached the altar. It was touching to see the Prelate’s greeting each other during the moment of the “kiss of peace”. Later on, during Holy Communion, clergy members formed four rows to receive Holy Communion from the Prelates.

Following Mass, Archbishop Hovnan Derderian welcomed the Prelates and clergy members on this “historic day”. He then invited the Prelates individually to deliver their remarks. Prior to each Prelate’s remarks, clergy members of that respective church sang a hymn. The Prelates expressed thanks and gratitude for the special day and express the necessity of such gatherings to become more familiarized with each other and be enriched from each other. They also recognized the four religious leaders of each church, H.H. Aram I, H.H. Karekin II, Pope Shnouda III, and Patriarch Zacha.

Following the Prelate’s remarks, Very Rev. Fr. Dajad Yardemian delivered the message of the day.

After the remarks, a group picture was taken followed by lunch. Archbishop Moushegh Mardirossian then presented all those in attendance with copies of Garo Bedrossian’s “Feasts and Traditions of the Armenian Church” and “Sundays of Great Lent” books.

The Prelates also had closed meetings to discuss the possibility of similar events in the future. The gathering then concluded in the same warm atmosphere in which it began.